Վարդապետության սերտում. Գնահատում 1. Ուսումնասիրության ուղեցույց

1 ՆԵՓԻ 3.7 – ՄՈՍԻԱ 18.8–10

Անգիր սովորեք հղումը և սուրբգրային հիմնական արտահայտությունը

Ծանոթացեք վարդապետության սերտման սուրբ գրության հղումներին և հիմնական արտահայտություններին: Ներբեռնեք և օգտագործեք Doctrinal Mastery բջջային հավելվածը, որը կօգնի ձեզ կրկնելիս:

Սուրբ գրության հղումը	Սուրբգրային հիմնական արտահայտությունը
1 Նեփի 3.7	«Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:
2 Նեփի 2.25	«Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:
2 Նեփի 2.27	«Նրանք ազատ են ընտրելու ազատություն և հավերժական կյանք . . . կամ . . . գերություն և մահ»:
2 Նեփի 26.33	«Բոլորը նույնն են Աստծո համար»:
2 Նեփի 28.30	Աստված «կտա մարդկանց զավակներին՝ տող առ տող, ցուցում առ ցուցում»:
2 Նեփի 32.3	«Սնվեք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:
2 Նեփի 32.8–9	«Դուք պետք է միշտ աղոթեք»:
Մոսիա 2.17	«Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:
Մոսիա 2.41	«Նրանք, ովքեր պահում են Աստծո պատվիրանները . . . օրհնված են բոլոր բաներում»:
Մոսիա 3.19	«[Հանեք] բնական մարդուն և [դարձեք] սուրբ, Տեր Քրիստոսի Քավությամբ»:
Մոսիա 4.9	«Հավատացեք Աստծուն, . . . հավատացեք, որ Նա ունի բոլոր իմաստությունը»:
Մոսիա 18.8–10	«Մկրտվեք Տիրոջ անունով՝ . . . որպես մի վկայություն . . . որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ»:

Կիրառեք վարդապետությունը իրական կյանքում

- Օգտագործեք վարդապետության սերտման սուրբ գրությունների մեկ կամ մի քանի հատվածներ, որպեսզի օգնեք մեկին, ով ցանկանում է առաջնորդություն ստանալ՝ իր կյանքում կարևոր որոշումներ կայացնելիս:

_____

_____

- Ընտրեք մեկ կամ մի քանի հատված՝ օգնելու մեկին, ով զգում է, որ իր հանգամանքների պատճառով դժվար է պահել Աստծո պատվիրանները:

- Ընտրեք վարդապետության սերտման հատվածներից որևէ մեկը և մտածեք մի իրավիճակ, երբ այդ հատվածում ուսուցանված ճշմարտությունները կարող են օգնել դեռահասին իր կյանքում: Եթե հնարավոր է, հիշեք իրական իրավիճակներ, որոնց մասին գիտեք կամ բախվել եք դուք ինքներդ:

- Պատրաստ եղեք կիսվելու ձեզ վրա ամենամեծ ազդեցությունը թողած վարդապետության սերտման հատվածներով: Այդ հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները

Կարդացեք 5–12-րդ պարբերությունները *Վարդապետության սերտման հիմնարար փաստաթղթում* (2023) «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնում: Խորհեք, թե ինչպես կարող եք օգտագործել հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները, որպեսզի օգնեք որևէ մեկին հաղթահարել իր առջև ծառացած խնդիրները կամ մտահոգությունը:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.